



ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ



- ✓ ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕՂ
- ✓ ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ
- ✓ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅԱՅԻՆ ՋՐԵՐ
- ✓ ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ
- ✓ ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ
- ✓ ԹԱՓՈՆՆԵՐ

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ	6
Երևան	6
Գյումրի	14
Վանաձոր	16
Ալավերդի.....	19
Հրազդան	23
Արարատ	26
Հանրապետության տարբեր բնակավայրեր	28
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ	29
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	29
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք.....	35
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	40
Սևանի ջրավազանային կառավարման տարածք.....	46
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք.....	49
Հարավային ջրավազանային կառավարման տարածք.....	53
Ծաղկաձորում շրջակա միջավայրի մոնիթորինգ	61
«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր»	69
Հավելված 1. ՀՀ գետերի ջրի որակը 2018թ. 2-րդ եռամսյակում	72
Հավելված 2. ՀՀ ջրամբարների ջրերի որակը 2018թ. 2-րդ եռամսյակում.....	85
Հավելված 3. Արաքս գետի ջրի մոնիթորինգի արդյունքները 2018թ. 2-րդ եռամսյակում	86
Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետերը	88
Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	92
Ստորերկրյա ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	93
Տեղումներում որոշվող ցուցանիշների ցանկ	93
Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները.....	94
Հողում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները	94
Մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը.....	95
Մակերևութային ջրերի ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ	96

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տեղեկագրում ներկայացված են մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա ջրերի, մթնոլորտային տեղումների, հողերի, հատակային նստվածքների որակի, ինչպես նաև թափոնների մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվություն՝ 2018 թվականի 2-րդ եռամսյակն ընդգրկող ժամանակահատվածի համար:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 16 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 211 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարին 5-12 անգամ հաճախականությամբ: Գնահատման այս համակարգը սահմանվել է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) 100 ստորերկրյա ջրաղբյուր, որտեղ ներառված են 23 շատրվանող հորատանցք, 22 չշատրվանող հորատանցք և 55 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտակումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Պարբերաբար կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 40 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ինդիկատորային ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր):

Ներկայումս հողային ծածկույթի մոնիթորինգ իրականացվում է Ծաղկաձոր քաղաքում: Յուրաքանչյուր հողի նմուշում որոշվում է մինչև 30 ինդիկատորային ցուցանիշ (մետաղական կազմ): Հողերի աղտոտվածությունը գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն որոշման:

Հատակային նստվածքի մոնիթորինգ իրականացվում է Արաքս գետում, որտեղ որոշվում է մինչև 30 ինդիկատորային ցուցանիշ (մետաղական կազմ):

Թափոնների ուսումնասիրումը կատարվում է կոմունալ աղբավայրերում: Կայուն օրգանական աղտոտիչների պարունակությունները որոշելու համար կատարվում են

հողի և ջրի նմուշառումներ: Յուրաքանչյուր նմուշում որոշվում է մինչև 19 քլորօրգանական պեստիցիդներ և 24 պոլիքլորացված ֆիֆենիլներ:

Տեղեկագրում ներկայացված են նաև միջազգային համագործակցության շրջանակներում կատարվող աշխատանքների արդյունքները.

- «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի ատոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման» (EMEP) ծրագրի շրջանակներում ՀՀ-ում գործում է մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի առաջին մակարդակի դիտակայան (Ամբերդի դիտակայան): Դիտակայանի մթնոլորտային օդի և մթնոլորտային տեղումների որակի մոնիթորինգի արդյունքները ներկայացվում են կոնվենցիայի քիմիական կոորդինացիոն կենտրոն՝ անդրսահմանային օդի աղտոտվածության տվյալների միասնական համակարգի (EBAS) միջոցով, որը գործում է Նորվեգիայի օդի հետազոտության ինստիտուտի ներքո: Մոնիթորինգի և արտանետումների տվյալների հիման վրա Նորվեգիայի օդերևութաբանական ինստիտուտի կողմից կատարվում է օդի անդրսահմանային աղտոտման մոդելավորում և պատրաստվում է Հայաստանի Հանրապետության համար տարեկան զեկույց:

- Հայաստանի Հանրապետությունը Իրանի Իսլամական Հանրապետության հետ համատեղ կատարում է սահմանային Արաքս գետի ջրի և հատակային նստվածքների ուսումնասիրություններ՝ երկու երկրների տարածքներից աղտոտվածության վիճակը գնահատելու նպատակով: Պարբերաբար երկու երկրների միջև տեղի է ունենում տվյալների փոխանակում:

Տեղեկագրում օգտագործվել են հետևյալ հապավումները.

- ՍԹԿ — սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
- ԸԱԱ — ընդհանուր անօրգանական ազոտ
- ԸԼԱ — ընդհանուր լուծված աղեր
- ԿՆ — կախյալ նյութեր

ՀՀ մթնոլորտային օդի, մակերևութային ջրերի, ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի մոնիթորինգի դիտացանց



ՄԹՆՈԼՈՐՏՍՅՒՆ ՕՂ

2018թ. 2-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան, Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 14 անշարժ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայան, որոնցից չորսում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվում են նաև ավտոմատ դիտարկումներ, և 197 շարժական պասիվ նմուշառման դիտակետ: Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար ապրիլ, մայիս, հունիս ամիսներին ակտիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 3776 փորձանմուշ: Հանրապետության 9 բնակավայրի պասիվ նմուշառման դիտակետերից վերցվել է մթնոլորտային օդի 4553 փորձանմուշ: Երևան և Ալավերդի քաղաքների շարժական դիտակետերում կատարվել է մթնոլորտային օդի՝ համապատասխանաբար 55133 և 24205 ավտոմատ դիտարկում:

Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան, Քաջարան, Ծաղկաձոր քաղաքների մթնոլորտային մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.armmonitoring.am ինտերնետային կայքում:

Երևան

Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի*** և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և հինգ անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած երեք դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2018թ. 2-րդ եռամսյակում անշարժ դիտակայաններում կատարվել է մթնոլորտային օդի 55133 ավտոմատ դիտարկում, վերցվել է ակտիվ նմուշառման 1818 փորձանմուշ, իսկ շարժական դիտակետերից պասիվ նմուշառման 1014 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

* կախված մասնիկներ

** անհիդրիդ ծծմբային

*** ածխածնի օքսիդ

*Երևան քաղաքի մթնոլորտային օդի 2018թ. 2-րդ եռամսյակում կատարված
դիտարկումների արդյունքները (ակտիվ նմուշառում)*

Ապրիլ

<i>Աղտոտող նյութ</i>	<i>ՄԹԿ (միջին օրական), մգ/մ³</i>	<i>Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³</i>	<i>Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)</i>	<i>Դիտարկումների քանակ</i>	<i>ՄԹԿ-ից գերազանցումների քանակ</i>
<i>Ծծմբի երկօքսիդ</i>	<i>0.05</i>	<i>0.036</i>	<i>0.078 (դիտ. № 7)</i>	<i>150</i>	<i>23</i>
<i>Ազոտի երկօքսիդ</i>	<i>0.04</i>	<i>0.025</i>	<i>0.118 (դիտ. № 18)</i>	<i>150</i>	<i>17</i>
<i>Փոշի</i>	<i>0.15</i>	<i>0.122</i>	<i>0.604 (դիտ. № 18)</i>	<i>150</i>	<i>50</i>
<i>Գետնամերձ օզոն</i>	<i>0.03</i>	<i>0.008</i>	<i>0.017 (դիտ. № 18)</i>	<i>150</i>	<i>-</i>




Մայիս

<i>Աղտոտող նյութ</i>	<i>ՄԹԿ (միջին օրական), մգ/մ³</i>	<i>Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³</i>	<i>Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)</i>	<i>Դիտարկումների քանակ</i>	<i>ՄԹԿ-ից գերազանցումների քանակ</i>
<i>Ծծմբի երկօքսիդ</i>	<i>0.05</i>	<i>0.033</i>	<i>0.064 (դիտ. № 8)</i>	<i>155</i>	<i>9</i>
<i>Ազոտի երկօքսիդ</i>	<i>0.04</i>	<i>0.027</i>	<i>0.089 (դիտ. № 1)</i>	<i>155</i>	<i>27</i>
<i>Փոշի</i>	<i>0.15</i>	<i>0.128</i>	<i>0.596 (դիտ. № 7)</i>	<i>154</i>	<i>51</i>
<i>Գետնամերձ օզոն</i>	<i>0.03</i>	<i>0.007</i>	<i>0.025 (դիտ. № 1)</i>	<i>155</i>	<i>-</i>




Հունիս

<i>Աղտոտող նյութ</i>	<i>ՄԹԿ (միջին օրական), մգ/մ³</i>	<i>Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³</i>	<i>Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)</i>	<i>Դիտարկումների քանակ</i>	<i>ՄԹԿ-ից գերազանցումների քանակ</i>
<i>Ծծմբի երկօքսիդ</i>	<i>0.05</i>	<i>0.033</i>	<i>0.080 (դիտ. № 7)</i>	<i>150</i>	<i>12</i>
<i>Ազոտի երկօքսիդ</i>	<i>0.04</i>	<i>0.017</i>	<i>0.066 (դիտ. № 18)</i>	<i>150</i>	<i>9</i>
<i>Փոշի</i>	<i>0.15</i>	<i>0.065</i>	<i>0.263 (դիտ. № 1)</i>	<i>149</i>	<i>12</i>
<i>Գետնամերձ օզոն</i>	<i>0.03</i>	<i>0.008</i>	<i>0.016 (դիտ. № 1)</i>	<i>150</i>	<i>-</i>




Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը






Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Երևանի սահմանագիծ

Սծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Պայմանական նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակետեր
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Երկաթգծեր
-  Գետային ցանց
-  Երևանի սահմանագիծ

Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Գյումրի



Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:

Անշարժ դիտակայանում վերցվել է մթնոլորտային օդի ակտիվ նմուշառման 82 փորձանմուշ, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման 567 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:




Անշարժ դիտակայաններում վերցվել է մթնոլորտային օդի ակտիվ նմուշառման 819 փորձանմուշ, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման 624 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ապրիլ ամսին գերազանցել է ՄԹԿ-ն 1.4 անգամ, մայիսին՝ 1.7, իսկ հունիսին՝ 1.6: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան մայիս ամսին գերազանցել է ՄԹԿ-ն 2.1 անգամ, հունիսին՝ 2.7 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան երեք ամիսների ընթացքում չի գերազանցել համապատասխան ՄԹԿ-ն:




* Ապրիլին Վանաձոր քաղաքի փոշու տվյալները ցածր վստահելիության պատճառով օդի որակի գնահատման մեջ հաշվի չեն առնվել

Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների կոնցենտրացիաների փոփոխությունները.




Ծծմբի երկօքսիդ (SO₂)
 Կոնց. (մգ/մ³)

Վա ն ա ձ ո ղ



Ազոտի երկօքսիդ (NO₂)
 Կոնց. (մգ/մ³)

Վա ն ա ձ ո ղ




Ալավերդի

Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և ածխածնի մոնօքսիդի դիտարկումներ: Գործում են երեք անշարժ դիտակայան և 42 շարժական դիտակետ:

2018 թվականի 2-րդ եռամսյակում անշարժ դիտակայաններում կատարվել է մթնոլորտային օդի 24205 ավտոմատ դիտարկում, վերցվել է ակտիվ նմուշառման 694 փորձանմուշ, իսկ շարժական դիտակետերից պասիվ նմուշառման 1085 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ապրիլ ամսին գերազանցել է ՍԹԿ-ն 1.5 անգամ, մայիսին՝ 2.3, հունիսին՝ 2.1 անգամ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիաները մայիս և հունիս ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան երեք ամիսների ընթացքում չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:


Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






* Ապրիլին Ալավերդի քաղաքի տվյալները ցածր վստահելիության պատճառով օդի որակի գնահատման մեջ հաշվի չեն առնվել

Ազոտի երկօքսիդ (NO₂)

Ալավերդի




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը






- Պայմանական նշաններ
- Պասիվ նմուշառման դիտակետեր
 - Ակտիվ նմուշառման դիտակետեր
 - Գետային ցանց
 - Ընկերային ճանապարհներ և փողոցներ
 - Միջպետական ճանապարհ
 - Երկաթգծեր
 - Բնակավայրերի սահման

Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($\mu\text{g}/\text{m}^3$)




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



- Պայմանական նշաններ
- Պասիվ նմուշառման դիտակետեր
 - Ակտիվ նմուշառման դիտակետեր
 - Գետային ցանց
 - Ճանապարհներ և փողոցներ
 - Միջպետական ճանապարհ
 - Երկաթգծեր
 - Բնակավայրերի սահման

Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($\mu g/m^3$)





Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետեր:



Անշարժ դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 272, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 434 փորձանմուշ:

Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ապրիլին գերազանցել է ՍԹԿ-ն 1.5 անգամ, մայիսին՝ 1.1 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ



- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Արդյունաբերական կետեր
- Ճանապարհներ և փողոցներ
- Գետային ցանց
- Բնակավայրերի սահման
- Աղբյուրակ ջրամբար



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակետեր
-  Արդյունաբերական կետեր
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Գետային ցանց
-  Բնակավայրերի սահման
-  Աղբյուրակ ջրամբար



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($\mu\text{g}/\text{m}^3$)




Արարատ



Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Անշարժ դիտակետում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 91 փորձանմուշ, շարժական դիտակայաններում պասիվ նմուշառման եղանակով՝ 288 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Հանրապետության տարբեր բնակավայրեր

2018թ. 2-րդ եռամսյակում շարժական դիտակետերում պասիվ նմուշառիչներով մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են հանրապետության Կապան, Քաջարան, Չարենցավան քաղաքներում:

Երեք ամիսների ընթացքում Կապան քաղաքի 11 շարժական դիտակետերից պասիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 129 փորձանմուշ, Քաջարան քաղաքի 15 դիտակետից՝ 176 փորձանմուշ, Չարենցավան քաղաքի 10 դիտակետից՝ 236 փորձանմուշ:

Նշված բնակավայրերի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



ՄԱԿԵՐՆՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ

2018թ. 2-րդ եռամսյակում մակերևութային ջրերի դիտարկումներ իրականացվել են հանրապետության 36 գետի, Երևանյան լճի, Արփի լճի, Ախուրյանի, Ապարանի, Ագատի, Կեչուտի ջրամբարների և Արփա-Սևան թունելի դիտակետերից, որտեղից վերցվել է 254 փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել է 45-ական ֆիզիկաքիմիական ցուցանիշ: Մայիս-հունիս ամիսներին իրականացվել է նաև Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգ: Լճի ջրի որակի ուսումնասիրության համար 17 դիտակետից վերցվել է ջրի 50 փորձանմուշ (փորձանմուշներ վերցվել են ինչպես լճի մակերևութից, այնպես էլ խորքային շերտերից): Սևանա լճի որակի, ինչպես նաև հունիս ամսվա մակերևութային ջրերի որակի վերաբերյալ տեղեկատվություն կտրվի հաջորդ տեղեկագրում: Ապրիլ, մայիս ամիսներին իրականացված դիտարկումների արդյունքները բերված են հավելվածներում աղյուսակների տեսքով: Մակերևութային ջրերի որոշ փորձանմուշներում որոշվել են նաև օրգանական միացությունների պարունակությունները, որոնք չեն գերազանցել համապատասխան էկոլոգիական նորմերը՝ սահմանված ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N 75-Ն որոշման հավելված N2-ում:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներ իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 100 ստորերկրյա ջրաղբյուրներում*, որոնք ներառում են 24 շատրվանող հորատանցք, 22 չշատրվանող հորատանցք և 56 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտակումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: 2018թ. 2-րդ եռամսյակում կատարվել է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ ազգային ցանցում ընդգրկված ջրաղբյուրների 40 դիտակետում, որոշվել է 40-ական ֆիզիկաքիմիական ցուցանիշ:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Փամբակ գետի Հարթազյուղից վերև հատվածում ջրի որակը ապրիլ ամսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Սպիտակից ներքև հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «լավ» (2-րդ դաս): Վանաձորից վերև հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Վանաձորից ներքև հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Դեբեդ գետի Մարցիգետի թափման կետից ներքև, Այրումից վերև և սահմանի մոտ հատվածներում ջրի որակը ապրիլ և մայիս ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

* Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի տվյալների թերի լինելը պայմանավորված է համապատասխան սարքավորման ժամանակավոր անսարքությամբ

** Ստորերկրյա ջրերի դիտակետերի տեսակը, համարները, տեղադիրքը տրված է տեղեկանքի 88-րդ էջում աղյուսակի տեսքով

Չորագետ գետի Ստեփանավանից վերև հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ ապրիլին «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Տաշիր գետի Միխայելովկայից վերև և Սարատովկայից ներքև հատվածներում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Մարցիգետ գետի գետաբերանի հատվածում ապրիլ ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «վատ» (5-րդ դաս):



Ախթալա գետի գետաբերանում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):





Գարգառ գետի ակունքում ապրիլ ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում՝ ապրիլ, մայիս ամսներին՝ «միջակ» (3-րդ դաս):

Շնող գետի գետաբերանում ապրիլին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Մայիսին Աղստև գետի՝ Դիլիջանից վերև և ներքև հատվածներում ջրի որակը գնահատվել «լավ» (2-րդ դաս), Իջևանից վերև հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս), սահմանի մոտ հատվածում՝ «վատ» (5-րդ դաս):


Գետիկ գետի Վահան գյուղից վերև հատվածում մայիսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում՝ «լավ» (2-րդ դաս):







Ստորերկրյա ջրեր

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնադբյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 1 դիտակետում: Ջրի ծախսի միջին ամսական արժեքները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկի տեսքով.




ԴԵԲԵԴ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ
ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ



ՊԱՅՄԱՆԱՎԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- | | |
|---------------------|-----------------------------------|
| ● Մարզկենտրոն | ● Մակերևութային ջրերի որակի դասեր |
| ● Քաղաքներ | ● 2-րդ դաս |
| ● Գյուղեր | ● 3-րդ դաս |
| — Գետային ցանց | ● 4-րդ դաս |
| — 22 պետական սահման | ● 5-րդ դաս |
| — Լճեր և ջրամբարներ | |
| □ Դերեղ գետի ավազան | |

ԱՂՍՏԵՎ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ (ՄԱՅԻՍ 2018)



Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք



Մակերևութային ջրեր

Ախուրյան գետի Ամասիայից ներքև հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «վատ» (5-րդ դաս): Գյումրիից վերև հատվածում՝ ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Գյումրիից ներքև հատվածում երկու ամիսների ընթացքում՝ «անբավարար» (4-րդ դաս): Բագարանից ներքև հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Աշոցք գետի Մուսայելյանից վերև հատվածում մայիսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում ապրիլ և մայիս ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս):

Կարկաչուն գետի գետաբերանում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):




Մայիսին Մեծամոր գետի Վաղարշապատից հարավ և Ռանչպարից ներքև ընկած հատվածներում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վաղարշապատից հարավ-արևելք ընկած հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս):






Ստորերկրյա ջրեր


Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 13 բնադբյուրում, 5 շատրվանող և 17 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 15 դիտակետում որոշված միացութ-

յուններից ամոնիում իոնի և ընդհանուր կոշտության կոնցենտրացիաները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով.






ԱՌՈՒՐՅԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ




ՊԱՅԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Ջրմբ. նմուշառման դիտակետեր
 - ⚡ Մակերևութային ջրերի նմուշառման դիտակետեր
 - ⚡ Ստորերկրյա ջրերի դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Ախուրյան գետի ափագան
-
- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս



**ՄԵԾԱՄՈՐ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ
ՏԵՂԱԴԻՐՔԸ (ՄԱՅԻՍ 2018)**



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

● Մարզկենտրոն	● Մակերեսային ջրերի որակի դասեր
● Բաղարներ	● 3-րդ դաս
● Գյուղեր	● 4-րդ դաս
— Գետային ցանց	
 ՀՀ պետական սահման	
 Լճեր և ջրամբարներ	
 Մեծամոր գետի ավազան	



Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Ապրիլ և մայիս ամիսներին Քասախ գետի ջրի որակը Ապարանից ներքև հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Ապարանից վերև, Աշտարակից վերև և ներքև հատվածներում, ինչպես նաև գետաբերանի հատվածում երկու ամիսների ընթացքում Քասախ գետի ջուրը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Գեղարոտ գետի գետաբերանում մայիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում ապրիլ ամսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին «միջակ» (3-րդ դաս):




Շաղվարդ գետի Փարպիից ներքև հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Մայիսին Հրազդան գետի Քաղսիից ներքև և Արգելից ներքև հատվածներում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Արգնի ՀԷԿ-ից ներքև, Երևանից ներքև, Գեղանիստի մոտ և գետաբերանի հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետառ գետի գետաբերանում մայիսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):





Մարմարիկ գետի Հանքավանից վերև և գետաբերանի հատվածներում մայիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):










Ստորերկրյա ջրեր

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 6 բնադրյուրում, 9 շատրվանող և 7 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգ իրականացվել է 8 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 8 դիտակետերում որոշված միացություններից ամոնիում իոնի և ընդհանուր կոշտության կոնցենտրացիաները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով.






ՔԱՍԱԽ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**
- | | | | |
|---|--|---|---------------------------------|
| ● | Մարզկենտրոն | ● | Մակերևութային ջրերի որակի դասեր |
| ● | Քաղաքներ | ● | 3-րդ դաս |
| ● | Գյուղեր | ● | 4-րդ դաս |
| ● | Ջրմբ. նմուշառման դիտակետ | ● | 5-րդ դաս |
| ● | Մակերևութային ջրերի նմուշառման դիտակետեր | | |
| ● | Ստորերկրյա ջրերի դիտակետեր | | |
| — | Փետային ցանց | | |
| — | Լճեր և ջրամբարներ | | |
| — | Քառախ զետի պիսազան | | |

**ՀՐԱԶԴԻԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ
ԵՎ ՍՏՈՐԵԼԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ
(ՄԱՅԻՍ 2018)**



Մեանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Ձկնագետ գետի Սեմյոնովկայից վերև և գետաբերանի հատվածներում ապրիլին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Ապրիլին Մասրիկ գետի Վերին Շորժայից վերև հատվածում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս):

Սոթք գետի հանքավայրից վերև հատվածում ապրիլ ամսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս):

Կարճաղբյուր գետի Աղբյուրաձորից վերև և գետաբերանի հատվածներում ապրիլին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Վարդենիս գետի Վարդենիկից վերև և գետաբերանի հատվածներում ապրիլին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Մարտունի գետի Գեղհովիտից վերև և գետաբերանի հատվածներում ապրիլին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Արգիճի գետի Լեռնահովիտից վերև և գետաբերանի հատվածներում ապրիլին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Ծակքար գետի գետաբերանի հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):





Շողվազ գետի գետաբերանի հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Գավառագետի Ծաղկավանից վերև հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս):

Ստորերկրյա ջրեր

Մեանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 5 բնաղբյուրում, 6 շատրվանոց հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգ իրականացվել է 6 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 6 դիտակետերում որոշված միացություններից ամոնիում իոնի և ընդհանուր կոշտության կոնցենտրացիաները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:





**ՄԵՎԱՆԻ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳԵՏԵՐԻ ՋՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ (ԱՊՐԻԼ 2018)**




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՐՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Գյուղեր
- ◆ Մտորերկրյա ջրերի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Մևանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Վեդի գետի Ուրցաձորից վերև հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Արարատից ներքև հատվածում մայիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Արփա գետի Ջերմուկից վերև և Վայքից վերև հատվածներում ապրիլին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Վայքից ներքև հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Եղեգնաձորից վերև և Արենիից ներքև հատվածներում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):





Եղեգիս գետի Շատինից ներքև հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Արփա-Սևան թունելի ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Ստորերկրյա ջրեր

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 10 բնադրյուրում, 3 շատրվանող և 10 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Կատարվել է նաև որակի մոնիթորինգ 6 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 6 դիտակետերում որոշված միացություններից ամոնիում իոնի և ընդհանուր կոշտության կոնցենտրացիաները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:







**ԱԶԱՏ ԵՎ ՎԵՂԻ ԳԵՏԵՐԻ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- | | | | |
|--|-------------------------------|--|-------------------|
| | Մարզկենտրոն | | Լճեր և ջրամբարներ |
| | Քաղաքներ | | Վեղի գետի ավազան |
| | Գյուղեր | | Ագստ գետի ավազան |
| | Ջրմբ. նմուշառման
դիտակետ | Մակերևութային ջրերի
որակի դասեր | |
| | Ջրի նմուշառման
դիտակետեր | | 2-րդ դաս |
| | Ստորերկրյա ջրերի
դիտակետեր | | 3-րդ դաս |
| | Գետային ցանց | | 4-րդ դաս |
| | ՀՀ պետական սահման | | |

**ԱՐՓԱ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼԵԱՆՆԵՐ**
- | | | | |
|--|-----------------------------|--|-------------------------------|
| | Մարզկենտրոն | | Մակերեսային ջրերի որակի դասեր |
| | Քաղաքներ | | 2-րդ դաս |
| | Գյուղեր | | 3-րդ դաս |
| | Զբոս. կուրորտային տարածքներ | | 4-րդ դաս |
| | Ստորերկրյա ջրերի զիտակետեր | | |
| | Գետային ցանց | | |
| | ՀՀ պետական սահման | | |
| | Արփա գետի ավազան | | |
| | Արփա գետի ավազան | | |

Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Մեղրիգետի Մեղրիից վերև և գետաբերանի հատվածներում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Կարճևան գետի գետաբերանում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Ողջի գետի Քաջարանից վերև հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «լավ» (2-րդ դաս): Քաջարանից ներքև հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Կապանից վերև հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Կապանի օդանավակայանից ներքև հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):


Աճանան (Նորաշենիկ) գետի Աճանանից վերև հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանի հատվածում ապրիլ և մայիս ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս):




Գեղի գետի Աջաբաջից վերև հատվածում մայիսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «լավ» (2-րդ դաս):

Որոտան գետի Գորայքից վերև հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «լավ» (2-րդ դաս): Միսիանից վերև հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Միսիանից ներքև հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Տաթև ՀԷԿ-ից ներքև ընկած հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Միսիան գետի Արևիսից վերև հատվածում մայիսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):





Վարարակ գետի Գորիսից վերև հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «լավ» (2-րդ դաս): Գորիսից ներքև հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):







Ստորերկրյա ջրեր

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 7 բնադրյալում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ջրի որակի մոնիթորինգ իրականացվել է 4 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 5 դիտակետերում որոշված միացություններից ամոնիում իոնի և ընդհանուր կոշտության կոնցենտրացիաները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:





**ՄԵՂՐԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ
(ՄԱՅԻՍ 2018)**



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՇԱՆՆԵՐ**
- | | | | |
|--|-------------------|---------------------------------|----------|
| | Մարզկենտրոն | Մակերևութային ջրերի որակի դասեր | |
| | Քաղաքներ | | |
| | Գյուղեր | | 3-րդ դաս |
| | Գետային ցանց | | 5-րդ դաս |
| | ՀՀ պետական սահման | | |
| | Մեղրի գետի ավազան | | |



ՈՂՋԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ



ՊԱՅՄԱՆԱՎԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- | | | | |
|--|-------------------|--|---------------------------------|
| | Մարզկենտրոն | | Մակերևութային ջրերի որակի դասեր |
| | Քաղաքներ | | 2-րդ դաս |
| | Գյուղեր | | 3-րդ դաս |
| | Գետային ցանց | | 4-րդ դաս |
| | ՀՀ պետական սահման | | 5-րդ դաս |
| | Լճեր և ջրամբարներ | | |
| | Ողջի գետի ավազան | | |

**ՈՐՈՏԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**





- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**
- | | | | |
|--|--|--|---------------------------------|
| | Քաղաքներ | | Մակերևութային ջրերի որակի դասեր |
| | Գյուղեր | | 2-րդ դաս |
| | Մակերևութային ջրերի նմուշառման դիտակետ | | 3-րդ դաս |
| | Ստորերկրյա ջրերի դիտակետեր | | 4-րդ դաս |
| | Գետային ցանց | | 5-րդ դաս |
| | ՀՀ պետական սահման | | |
| | Լճեր և ջրամբարներ | | |
| | Որոտան գետի ավազան | | |

Արաքս գետ

2018թ. ապրիլ և մայիս ամիսներին վերցվել են փորձանմուշներ Արաքս գետի ջրի 11 դիտակետից: Վերցված ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատնտեսական ՍԹԿ-ով գնահատման, դիտվում է վանադիումով, որոշ փորձանմուշներում պղնձով, քրոմով, մանգանով, երկաթով և ալյումինով բարձր աղտոտվածություն: Որոշված մյուս ցուցանիշներից գերազանցվել են ԹԿՊ₅-ի, ԹՔՊ-ի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, ցինկի, նիկելի, կոբալտի և սելենի ՍԹԿ-ները: Արաքս գետի աղտոտվածության գերազանցումների վերաբերյալ մանրամասն տեղեկություն ըստ առանձին ամիսների տրվում է հավելված 3-ում: Հատակային նստվածքներում որոշված որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են աղյուսակի տեսքով.

<i>Կոնցենտրացիա, զ/կգ</i>	<i>Դիտակետ</i>					
	<i>AMS_1</i>	<i>AMS_2</i>	<i>AMS_3</i>	<i>IMS_1</i>	<i>IMS_3</i>	<i>IMS_5</i>
<i>Ալյումին</i>	<i>40.36</i>	<i>16.82</i>	<i>12.02</i>	<i>72.30</i>	<i>32.81</i>	<i>41.32</i>
<i>Երկաթ</i>	<i>39.81</i>	<i>10.60</i>	<i>31.49</i>	<i>70.49</i>	<i>32.26</i>	<i>26.23</i>
<i>Մանգան</i>	<i>0.848</i>	<i>0.256</i>	<i>0.342</i>	<i>1.322</i>	<i>0.828</i>	<i>0.550</i>
<i>Նիկել</i>	<i>0.070</i>	<i>0.013</i>	<i>0.023</i>	<i>0.134</i>	<i>0.079</i>	<i>0.021</i>
<i>Պղինձ</i>	<i>0.056</i>	<i>0.522</i>	<i>1.033</i>	<i>0.058</i>	<i>0.056</i>	<i>0.465</i>
<i>Արսեն</i>	<i>0.014</i>	<i>0.007</i>	<i>0.016</i>	<i>0.014</i>	<i>0.012</i>	<i>0.009</i>
<i>Մոլիբդեն</i>	<i>0.0015</i>	<i>0.0269</i>	<i>0.0348</i>	<i>0.0010</i>	<i>0.0010</i>	<i>0.0181</i>

**«ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ»
 ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԵՏԻ ԶՐԻ
 ՈՐԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ**



- ՊԱՅԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**
 Մակերևութային ջրերի
 ներշնչման դիտակետեր
- ՀՀ տարածքից
 - ԻԻՀ տարածքից
 - Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ

Ծաղկածորում շրջակա միջավայրի մոնիթորինգ



Մթնոլորտային օդ

Ծաղկածոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:



Անշարժ դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 273, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 364 փորձանմուշ:

Մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.



Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.



Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ



-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակետեր
-  Փետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Բնակավայրերի սահման



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)



Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակետեր
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Բնակավայրերի սահման



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Հողային ծածկույթ

2018թ. 2-րդ եռամսյակում վերցվել է հողային ծածկույթի 10 փորձանմուշ՝ հողում մետաղների պարունակության գնահատման նպատակով:

Կոնցենտրացիա, գ/կգ	ՄԹԿ, գ/կգ	Դիտակետ									
		1	2	3	4	5	6	7	8	9	10
Լիթիում	0.032	0.033	0.010	0.011	0.017	0.016	0.013	0.012	0.015	0.018	0.015
Նատրիում	—	15.15	7.90	10.70	10.36	8.29	7.54	7.53	5.32	11.75	5.16
Մագնեզիում	—	1.97	0.92	0.75	1.68	2.14	1.29	0.84	1.54	0.50	0.70
Կալիում	—	12.78	4.97	9.68	9.06	8.31	5.74	7.26	5.49	2.88	4.18
Կալցիում	—	15.36	13.42	2.25	11.63	8.76	12.68	6.46	6.51	10.92	8.89
Վանադիում	0.15	0.169	0.057	0.024	0.063	0.053	0.068	0.080	0.093	0.067	0.059
Քրոմ	0.006	0.129	0.039	0.017	0.058	0.049	0.052	0.061	0.077	0.052	0.050
Երկաթ	—	41.86	16.45	9.18	20.94	21.11	20.58	17.63	23.32	16.78	13.96
Մանգան	—	0.977	0.459	0.234	0.489	0.776	0.443	0.415	0.457	0.607	0.499
Կոբալտ	0.005	0.037	0.012	0.005	0.013	0.014	0.015	0.014	0.017	0.014	0.012
Նիկել	0.004	0.116	0.034	0.014	0.044	0.036	0.043	0.046	0.064	0.048	0.047
Պղինձ	0.003	0.072	0.024	0.011	0.027	0.029	0.028	0.030	0.032	0.026	0.041
Ցինկ	0.023	0.140	0.061	0.030	0.069	0.096	0.067	0.073	0.052	0.080	0.151
Արսեն	0.002	0.033	0.013	0.008	0.015	0.013	0.015	0.015	0.018	0.013	0.014
Ստրոնցիում	—	0.140	0.085	0.077	0.114	0.179	0.103	0.053	0.059	0.067	0.066
Սոլիբրեն	—	0.0034	0.0011	0.0017	0.0017	0.0014	0.0012	0.0015	0.0010	0.0010	0.0012
Կադմիում	—	0.00094	0.00025	0.00019	0.00042	0.00454	0.00036	0.00041	0.00038	0.00033	0.00046
Ծարիր	0.0045	0.00167	0.00058	0.00032	0.00072	0.0006	0.00077	0.00100	0.00092	0.00077	0.00152
Բարիում	—	0.315	0.174	0.201	0.355	0.366	0.259	0.103	0.118	0.095	0.116
Կապար	0.32	0.042	0.016	0.018	0.022	0.024	0.023	0.023	0.020	0.021	0.042

Ծաղկաձորի հողային ծածկույթի որակի
մոնիթորինգի դիտացանց



Տանձադրյուր գետի ջրի որակը 2018թ. 2-րդ եռամսյակում

Մայիս


Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Տանձադրյուր	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	Այլումին	3-րդ	3-րդ
		Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	Մանգան, վանադիում, երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ

Մթնոլորտային տեղումներ

2018թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է 13 անձրևի և 1 ձնախառն անձրևի փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել են 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով.

Ամսաթիվ	Ցուցանիշներ						
	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն (մկՍմ/սմ)	Մուլֆատ իոն (մգ/լ)	Քլորիդ իոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ֆտորիդ իոն (մգ/լ)	Սնունդում իոն (մգ/լ)
20-21.04.2018	6.85	51.2	4.60	0.88	4.10	0.005	2.597
21-22.04.2018	6.41	14.9	1.27	0.38	1.19	<0.005	0.799
06-07.05.2018	6.58	34.4	2.24	0.88	3.62	<0.005	2.715
08-09.05.2018	6.43	13.7	1.38	0.16	1.35	<0.005	1.173
09-10.05.2018	6.39	12.2	0.91	0.23	0.78	<0.005	0.897
13-14.05.2018	6.59	15.0	0.72	0.27	1.07	<0.005	1.051
29-30.05.2018	6.86	48.5	3.41	0.69	4.43	<0.005	2.245
30-31.05.2018	6.74	18.5	1.33	0.26	1.15	<0.005	1.100
01-02.06.2018	6.50	21.1	1.02	0.25	1.67	<0.005	1.675
03-04.06.2018	7.03	26.5	1.32	0.25	1.38	<0.005	1.736
